Պատվաստանյութեր

Ինչո՞ւ են դրանք կարևոր



Պատվաստումներն անվտանգ, արդյունավետ և հեշտ միջոց են՝

- Պաշտպանելու Ձեզ հիվանդություններից և ծանր հիվանդանալուց:
- Կանխելու հիվանդությունների փոխանցումը այլ մարդկանց, որոնք կարող են ծանր հիվանդանալ, օրինակ՝ տարեց մարդիկ, թույլ իմունային համակարգ ունեցող մարդիկ, հղի անձինք և այն մարդիկ, ովքեր չեն կարող պատվաստվել, որոշ դեպքերում՝ ներառյալ նորածինները:

Ո՞ւ են անհրաժեշտ պատվաստանյութերը:

- Պատվաստանյութերից կարող են օգուտ քաղել բոլորը՝ նորածիններից մինչև մեծահասակներ:
- Պատվաստանյութերը խորհուրդ են տրվում՝ հիմնվելով են Ձեր տարիքի և առողջական վիճակի վրա և կարող են Ձեզ անհրաժեշտ լինել դպրոցի, աշխատանքի, ճամփորդության կամ երեխաների խնամքի հաստատության համար:
- Առավելագույն պաշտպանության համար էական է, որ լինեք ժամանակին պատվաստված՝ ստանալով խորհուրդ տրվող բոլոր պատվաստանյութերը:

Իմանալու համար, թե ինչ պատվաստանյութեր են Ձեզ խորհուրդ տրվում, հարցրեք Ձեր բժշկական մատակարարին կամ դեղագործին: Խորհուրդ տրվող պատվաստանյութերի ցանկի համար այցելեք https://www.cdc.gov/vaccines:

Ինչպե՞ս են գործում պատվաստանյութերը:

- Պատվաստանյութերը սովորեցնում են Ձեր մարմնին ճանաչել վնասակար վիրուսները կամ բակտերիաները և ստեղծել հատուկ հակամարմիններ՝ Ձեզ առողջ պահելու համար, եթե երբևէ վարակվեք:
- Կան տարբեր տեսակի պատվաստանյութեր: Դրանք կարող են տրվել ներարկման, բերանի կամ քթի միջոցով:
- Շատ բաներ կարող են ազդել պատվաստանյութի առաջացրած պաշտպանության մակարդակի վրա, ներառյալ վարակի հետ շփման չափը, պատվաստանյութը ստանալուց հետո անցած ժամանակը և առողջության անհատական գործոնները: Թեև ոչ մի պատվաստանյութ 100%-ով կատարյալ չէ, դրանք Ձեզ ծանր հիվանդություններից պաշտպանելու լավագույն միջոցն են:

County of Los Angeles Public Health

Պատվաստանյութեր

Ինչո՞ւ են դրանք կարևոր



Ինչպե՞ս ենք մենք իմանում, որ պատվաստանյութերն անվտանգ են:

- Նախքան որևէ պատվաստանյութ հասանելի կլինի հանրությանը, բազմաթիվ փորձարկումներ են արվում իմանալու համար՝ արդյոք այն անվտանգ է և ապահովում է զգալիորեն ավելի լավ պաշտպանություն, քան եթե անձը ընդհանրապես պատվաստված չլինի:
- Դաշնային գործակալությունները հաստատում են նոր պատվաստանյութերը և հետևում են, թե դրանք ինչպես են օգտագործվում, ինչ կողմնակի ազդեցություններ և արդյունավետություն ունեն՝ ըստ անհրաժեշտության կատարելով փոփոխություններ:
- Գիտնականների, հիվանդանոցների և համալսարանների կողմից արված լայնածավալ ուսումնասիրությունները հերքել են պատվաստանյութերի մասին առասպելներն ու ապատեղեկատվությունը: Պատվաստանյութերը կապ չունեն աուտիզմի կամ անպտղության հետ և չեն փոփոխում ԴՆԹ-ն կամ առաջացնում հիվանդություններ:

Ինչո՞ւ է հնարավոր, որ ես ինձ վատ զգամ պատվաստվելուց հետո:

- Ինչպես դեղամիջոցները, պատվաստանյութերը կարող են ունենալ կողմնակի ազդեցություններ, ինչպիսք են ջերմությունը, հոգնածությունը, գլխացավ և այտուցը՝ պատվաստանյութի ներարկման մասում:
- Այս կողմնակի ազդեցությունները նշան են, որ Ձեր մարմինը ստեղծում է պաշտպանություն վիրուսի նկատմամբ:
- Մարդկաց մեծ մասն ունենում է միայն թեթև կողմակի ազդեցություններ կամ ընդհանրապես չի ունենում դրանք: Կողմնակի ազդեցությունները սովորաբար ինքնուրույն անհետանում են մի քանի օրվա ընթացքում:
- Լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են: Եթե կողմնակի ազդեցություններն ավելի են վատանում, անհանգաստացնում են Ձեզ կամ տևում են 2 օրից ավելի, կապ հաստատեք Ձեր մատակարարի հետ:

Հանրային Առողջության զանգերի կենտրոն

Հավելյալ տեղեկությունների համար Հանրային Առողջության զանգերի կենտրոնը հասանելի է **1-833-540-0473** հեռախոսահամարով ամեն օր՝ առավոտյան 8-ից երեկոյան 8:00-ը՝ շաբաթը յոթ օր: